<u>Ճամբարի կանոնակարգը</u>

SUMMEET4Kids - CAMP

ք. Գյումրի, Հայորդյաց Տան մշակութային կենտրոն

2026թ. հունիսի 22-26

1. Հիմնական դրույթներ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է «SUMMEET FOR KIDS - CAMP» ժամանակակից պարի միջազգային մանկական ճամբարի (այսուհետ՝ Ճամբար) անցկացման կարգը:

1.2. «SUMMEET FOR KIDS - CAMP» պարային ճամբարը միայն երեխաների համար եւ երեխաների մասին է: Այն թույլ է տալիս նրանց ծանոթանալ ժամանակակից պարի աշխարհի հետ, բացահայտել սեփական ստեղծագործական ներուժը եւ ոգեշնչել նրանց՝ պարի աշխարհում մասնագիտական ընթացքին:

1.3. Ճամբարը հանդիսանում է միջմշակութային և միջազգային հարաբերությունների ներդաշնակեցման ձևերից մեկը:

1.4. Ճամբարի հիմնադիրներ են հանդիսանում SUMMEET ժամանակակից պարի միջազգային ամառային փառատոնը, Գյումրու Հայորդյաց Տան մշակութային կենտրոնը եւ «Կաննոն Դանս» ժամանակակից խորեոգրաֆիայի զարգացման կենտրոնը (Ռուսաստանի Դաշնություն):

1.5. Ճամբարի կառավարումն իրականացնում է կազմակերպչական կոմիտեն, որի կազմում ընդգրկված են թվարկված հիմնադիրների գեղարվեստական ղեկավարները:

1.6. Ճամբարի մասնակից կարող է հանդես գալ ցանկացած ստեղծագործական կոլեկտիվ կամ անհատ, որը հաստատվել է կազմկոմիտեի կողմից:

2. Նպատակներն ու խնդիրները

2.1. Ճամբարն անց է կացվում Հայաստանում երեխաների շրջանում ժամանակակից պարի զարգացման եւ աջակցման համար:

2.2. Ժամանակակից պարի ոլորտում արտերկրի մասնագետների վարպետաց դասերի կազմակերպում:

2.3. Արտասահմանյան եւ հայկական պատանեկան պարային կոլեկտիվների ներկայացումների ցուցադրում:

2.4. Երեխաների համար «երիտասարդ պարուսույց-բեմադրողի» դերում ուժերը փորձելու եւ սեփական աշխատանքները ճամբար-փառատոնի գալա-համերգին ցուցադրելու հնարավորության ընձեռում:

2.5. Ամենօրյա զանազան միջոցառումների կամզակերպում, ինչի նպատակը երեխաների եւ պատանիների բազմակողմանի զարգացումն է, ինչպես նաեւ Գյումրու մշակույթի եւ պատմության հետ ծանոթացումը:

2.6. Յուրաքանչյուր մասնակցի համար եզակի հնարավորություն՝ դառնալու փառատոնի հրավիրյալ մանկավարժների մասնագիտական լաբորատորիայի լիարժեք անդամ, ընկղմվելու բեմադրական աշխատանքի մեջ եւ արդյունքները ցուցադրելու բեմում:

3. Ճամբարի մասնակիցները

3.1. Ճամբարին կարող են մասնակցել ստեղծագործական կոլեկտիվներ կամ անհատներ (պարային պատրաստությունը **պարտադիր է**): Թույլատրելի տարիքը՝ 10-20 տարեկան:

4. Անցկացման կարգը, ժամկետը եւ վայրը

4.1. Հայտերն ընդունվում են մինչեւ 2026թ. հունիսի 4-ը:

4.2. Ճամբարը տեղի կունենա 2026 թվականի հունիսի 22-26-ը Գյումրու Հայորդյաց Տան Մշակութային կենտրոնում եւ Գյումրու այլ վայրերում՝ համաձայն վարպետաց դասերի եւ պլանավորված այլ միջոցառումների ծրագրի:

4.3. Մասնակիցների գրանցումը կիրականացվի 2026 թվականի հունիսի 22-ին, ժամը 16:00-19:00:

4.4. Ճամբարի եզրափակիչ Գալա համերգը տեղի կունենա 2026 թվականի հունիսի 26-ին, ժամը 14:00-ին:

5. Հայտերի ընդունումը

5.1. Ճամբարին մասնակցության համար մինչեւ 2026 թվականի հունիսի 3-ը անհրաժեշտ է լրացնել եւ ուղարկել ճամբարի կայքում տեղադրված առցանց հայտը: https://summeetdance.org/forkids2026

5.2. Հայտն ուղարկելուց հետո մասնակցի կողմից նշված էլեկտրոնային հասցեին կգա հաստատում հայտի ընդունման եւ անհատի կամ կոլեկտիվի մասնակցության մասին: Ճամբարի կազմկոմիտեն իրավունք ունի մերժելու մասնակցության հայտը, եթե անհատը կամ կոլեկտիվը անհրաժեշտ տեխնիկական պատրաստություն չունեն:

6. Մասնակցության փաթեթներն ու ֆինանսական պայմանները

6. 1. Փաթեթ «Վարպետաց դասեր + լաբորատորիա + սնունդ/կացություն»

6.1.1. Փաթեթում ներառված են.

- կացությունը եւ երեքանգամյա սնունդ,

- խորեոգրաֆիկ ներկայացման ցուցադրում (տեւուղությունը՝ 3-5 րոպե) Ճամբարի եզրափակիչ Գալա համերգի շրջանակներում (2026-ի հունիսի 26),

- վարպետաց 6 դասեր (օրը երկուական, 2026-ի հունիսի 23-25, 10:00-13:15),

- մասնակցություն լաբորատորիային (2026-ի հունիսի 23-25, 17:00-20:00),

- լաբորատորիայի արդյունքների ցուցադրում Ճամբարի Գալա համերգին (2026-ի հունիսի 26),

- մշակութային ծրագիր (էքսկուրսիաներ, զբոսանքներ, ներկայացումներ),

Բոլոր միջոցառումների ժամանակացույցը եւ Ճամբարի վերջնական ծրագիրը մասնակիցներին կուղարկվեն մինչեւ 2026-ի հունիսի 8-ը:

6.1.2. Ֆինանսական պայմանները.

կոլեկտիվը վճարում է նախնական գրանցման հայտի գումար՝ 15 000 դրամի չափով յուրաքանչյուր մասնակցի համար, մասնակցության հաստատումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Կազմակերպչական մուտքավճարը ետ վերադարձի ենթակա է միայն մասնակցի անգործունակության դեպքում՝ բժշկական հաստատության կողմից տրված տեղեկանքի հիման վրա:

Յուրաքանչյուր մասնակցի համար մինչ 2026-ի հունիսի 8-ը կատարվում է 85 000 դրամ լրավճար: Ղեկավարները/մանկավարժները/մասնակիցներին ուղեկցողները

վճարում են միայն կացության եւ սննդի համար՝ մինչ 2026-ի հունիսի 8-ը, 35 000 դրամ:

Մուտքավճարը կատարելու ռեկվիզիտները մասնակիցների էլեկտրոնային հասցեներին կուղարկվեն մասնակցության հաստատումից հետո:

6. 2. Փաթեթ «Վարպետաց դասեր + լաբորատորիա»

6.2.1. Փաթեթում ներառված են.

- խորեոգրաֆիկ ներկայացման ցուցադրում (տեւուղությունը՝ 3-5 րոպե) Ճամբարի եզրափակիչ Գալա համերգի շրջանակներում (2026-ի հունիսի 26),

- վարպետաց 6 դասեր (օրը երկուական, 2026-ի հունիսի 23-25, 10:00-13:15),

- մասնակցություն լաբորատորիային (2026-ի հունիսի 23-25, 17:00-20:00),

- լաբորատորիայի արդյունքների ցուցադրում Ճամբարի Գալա համերգին (2026-ի հունիսի 26),

- մշակութային ծրագիր (էքսկուրսիաներ, զբոսանքներ, ներկայացումներ),

Բոլոր միջոցառումների ժամանակացույցը եւ Ճամբարի վերջնական ծրագիրը մասնակիցներին կուղարկվեն մինչեւ 2026-ի հունիսի 8-ը:

6.2.2. Ֆինանսական պայմանները.

կոլեկտիվը վճարում է նախնական գրանցման հայտի գումար՝ 15 000 դրամի չափով յուրաքանչյուր մասնակցի համար, մասնակցության հաստատումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Կազմակերպչական մուտքավճարը ետ վերադարձի ենթակա է միայն մասնակցի անգործունակության դեպքում՝ բժշկական հաստատության կողմից տրված տեղեկանքի հիման վրա:

Յուրաքանչյուր մասնակցի համար մինչ 2026-ի հունիսի 8-ը կատարվում է 55 000 դրամ լրավճար:

Մուտքավճարը կատարելու ռեկվիզիտները մասնակիցների էլեկտրոնային հասցեներին կուղարկվեն մասնակցության հաստատումից հետո:

6.3. **Փաթեթ «Վարպետաց դասեր»**

6.3.1. Փաթեթում ներառված են.

- վարպետաց 6 դասեր (օրը երկուական, 2026-ի հունիսի 23-25, 10:00-13:15),

Բոլոր միջոցառումների ժամանակացույցը եւ Ճամբարի վերջնական ծրագիրը մասնակիցներին կուղարկվեն մինչեւ 2026-ի հունիսի 8-ը:

6.3.2. Ֆինանսական պայմանները.

կոլեկտիվը վճարում է նախնական գրանցման հայտի գումար՝ 15 000 դրամի չափով յուրաքանչյուր մասնակցի համար, մասնակցության հաստատումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Կազմակերպչական մուտքավճարը ետ վերադարձի ենթակա է միայն մասնակցի անգործունակության դեպքում՝ բժշկական հաստատության կողմից տրված տեղեկանքի հիման վրա:

Յուրաքանչյուր մասնակցի համար մինչ 2026-ի հունիսի 8-ը կատարվում է 25 000 դրամ լրավճար:

Մուտքավճարը կատարելու ռեկվիզիտները մասնակիցների էլեկտրոնային հասցեներին կուղարկվեն մասնակցության հաստատումից հետո:

7. Լրացուցիչ դրույթներ

7.1. Մասնակիցների տրանսպորտային ծախսերը ներառված չեն մասնակցության վճարի մեջ:

7.2. Ճամբարի ընթացքում մասնակիցների տեղավորումը կացարաններում կազմակերպվում է կազմկոմիտեի կողմից (1-ին փաթեթի դեպքում) կամ ինքնուրույն:

7.3. Կազմկոմիտեն իրավունք ունի Ճամբարի ծրագրում փոփոխություններ կատարել՝ կախված ստացված հայտերի քանակությունից:

7.4. Մասնակից կոլեկտիվների պարուսույցներն ու գեղարվեստական ղեկավարները կարող են վարպետաց դասերն այցելել առանց լրացուցիչ պայմանների եւ վճարների: Ծնողներին եւ ուղեկցող անձանց արգելվում է ներկա գտնվել վարպետաց դասերին եւ ներկայացումների փորձերին:

7.5. Կոլեկտիվը պարտավոր է ապահովել ուղեկցող անձանց համապատասխան քանակություն, ովքեր ամբողջական պատասխանատվություն կկրեն երեխաների առողջության համար: Խնդրվում է Ճամբարի անցկացման վայրի տոմսեր ձեռք բերել միայն կազմկոմիտեի պաշտոնական հաստատումից հետո: Խմբի ղեկավարը պարտավոր է ունենալ անչափաս երեխայի օրինական խնամակալի ձեռագիր լիազորագիրը եւ խնամակալի անձնագրի պատճենը:

7.6. Կազմկոմիտեն իրավունք ունի փառատոնի կայքում, սոցիալական ցանցերում, էլեկտրոնային եւ տպագրական ՁԼՄ-ներում հրապարակել լուսանկարներ,

տեսանյութեր, եւ դրանք օգտագործել գովազդի մեջ՝ առանց մասնակից կոլեկտիվների եւ անհատների համաձայնության:

7.7. Կազմկոմիտեի էլեկտրոնային հասցեին հնարավոր է ուղարկել հարցել, առաջարկներ եւ բողոքներ՝ նշելով «SUMMEET - CAMP» նամակի վերնագրում: summeet4kids@gmail.com

Այլ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ստանալ՝ էլեկտրոնային հասցեի կամ հետեւյալ հեռախոսահամարի միջոցով՝

summeet4kids@gmail.com

+37477377112; +37498717340 ՀԱՅԱՍՏԱՆ

+79213651374 – ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ